47. ՉԸԼԽԱՏԵՆ

Կէղնին, չէղնին, կնիկըմ ու մարդըմ կէղնին. էդ մարդ ըռընճ-պար կէղնի։ Գարուն կելնի, օր ուրին հոտաղըմ բռնե։ Էդ օր հոտաղ կելնի բռնե, խուարզեն կլսե, կելնի կիգա քեռու մոտ, կասե.

— Քեռի, ախր դու հոտաղ կփնտռիս, զիս հ՚որի՞ չըս բռնի քղիկ հոտաղ։

Քեռին ասեց.— Բան չըմ ասի, քզիկ կբռնիմ, բըլե, վախե-նամ հոտզութեն չէնիս։

Տղեն ասեց.— Հմալ հոտղութեն մ՚էնիմ, օր ըսկի մարդ չէ էրե, բըլե բան մ՚կասիմ, դու պետք է էնիս։ Քեռի, դինա՞ս, ինչ օր կա-սիմ, իմ խոսքից պետք չէ դուրս էլնիս։

Քեռին ասեց.— Թըղ էղնի, զէն լէ կէնիմ։

Բռնեց. օր բռնեց խըլսան։ Քեռին էլավ առավ զուր խուարզեն ու գնաց հ՚արտ, վար ու ցանք կէներ։

Էդ քեռու կնիկ լէ, իրիցու դոստն էր։ Կեսօրվա տանի վախտ օր էղավ, էլավ էդ կնիկ պուտուկմ ըռժի շուրվա էփեց իրկան ու հոտղու համար, հավըմ, ամանմ փլավ լէ իրիցուն, առավ գնաց հ՚արտ։ Էլավ շալկեց զհաց ու առավ գնաց։ Գնաց առշին հեղ էլավ իրիցու խեչ, դրեց զշալակ գետին, կերան, խմեցին ու զուրանց քեֆ օր էրին փրթան, նոր չորս հինգ սահաթ սորա շալկեց շուրվեն. գնաց ուրանց հ՚արտ, հաց տարավ իրկան ու հոտզուն։

Օր տարավ, քեռին ու քուրորթին չէ՞, շատ անոթցած են, բերին դրին ու քաշեցին զգդալներ, էկան շուրվի բոլոր։

Կերան. օր խըլսան, հոտաղն ասեց.— Քեռենկի, էդա շուրվեն, հ՝որին անժուռ է (անեղ) ու պաղ։

Քեռենկին ասեց.— Քեռենկին մեռնի քուրորթուն, մինակ իմ, մեկ ձեռքըս խմորի հետն է, մեկ՝ թունդրին, անճախ էդ խըդար բան էրի։

Հոտաղ բանըմ չասեց, ասեց. «Կանի ես զքու հուն ու փունթ շուտ կհանիմ»։

Քեռենկին էլավ, շալկեց զուր ամներ, դառցավ, էկավ տուն։

Օլոր օր, մեկ լէ օր էղավ կեսօրվա հացի վախտ, Քեռենկին բերեց հավըմ կարմցուց, հավկիթ դախկեց իրիցու համար, պուտուկմ լէ անժուռ շուրվա շինեց իրկան ու հոտղուն, օր առնե էրթա։

Զըլխատեն թախմին էրեց օր կեսօրվա տանին մոտ է, ասեց.— Քեռի, էլի զլուծք հարձրկե, իմ Քեռենկին մինակ է, կէրթամ օգնիմ, առնինք հաց հ՝իգանք։

Էկավ հ՝ընցավ զիրիցու արտ, ու խանդրկի մը մեջ պատըվտավ։ Օր պատըվտավ, տեսավ օր Քեռենկին էկավ, հ՝ընցավ զինք ու դեմ քշեց իրիցու արտ։ Օր տեսավ Քեռենկին քշեց իրիցու հ՝արտ, հ՝ետևեն պոռաց.

— Յա՜, յա՜, Քեռենկի, էդ դո՞ր կէրթաս, մըր արտու ճամբախ էդ չէ։

Քեռենկին դառցավ ետևանց տեսավ օր ուրանց հոտաղն է։

Ասեց.— Քեռենկին մեռնի քուրորթուն, էսօր ձզիկ աղեկ զատ էփեր ենք, բռներ էր գլուխ, խելք կորցուցեր եմ, գինենք էդ էր, մըր հ՝արտու ճամբախ։ Բռնի, կէրթենք, աղեկ է օր էկար իմ հ՝առեջ, թե չէ՝ ուրիշ դիով կէրթենք։

Խուարզեն ասեց.— Օր հ՝մալ է, շալակ տուր ընծիկ։

Առավ շալակն շալկեց, ու հ՝ընկան ճամբախ, գացին։

Գացին օր հասան հ՝արտ, հոտաղ շալակ դրեց գետին։ Բացին,- ի՞նչ տեսնան աղեկ է, ինչ օր աստվածութեն ստեղծեր է, կարմբուկ հավ, ձվածեղ, փըլավ, մածուն, սեր, գաթա։

Զըլխատեն, հոտղու անուն Զըլխատա էր, զէդ օր տեսավ, վերուց ասեց.— Քեռենկի, աստված զխերն էնե, էսօր ի՞նչ դել է փիցի սար, էդ ինչ օր կա տուն, ժողովերիս, առի ու էկի։

Քեռենկին ասեց.— Իմալ էնիմ, հ՝ըմն օր գանգատ կէնեք՝

«Շուրվա, շուրվա», ես լէ շանդարդի էղա, հ՚էսօր աղեկ բան շինի, առա էկա, ասի՝ էդոնց ձեն պալքիմ կտրի անկաճիս տկեն։

Զրլխատեն ասեց.— Շատ աղեկ, էդա շուրվեն էլ ի՞նչ է։

Քեռենկին ասեց.— Մարսական է, էդոր հ՚ապով իմ բերե։

Ցրթրլան վրեն, աղեկըմ կերան, սրբին ղամներ, Քեռենկին էլավ, շալկեց ղուր ամներն ու էկավ օր իդեր էրթեր տուն։ Էկավ, դնաց իրիցու հ՚արտ։

Ասեց.— Տերտե՛ր, հրմլա չէղնի, էդա մըր հոտաղ շուն հոտաղ է, շըքի գացեր է, հ՚ըմնօր կեսօրվա հացի վախտ օր կիգա, կիգա իմ հ՚առեջ, չթողե հ՚իգամ քու հ՚արտ, կքաշե տանե ղիս մըր հ՚արտ։ Էդա հրմլա չէղնի, էլի լուսուն գնա ուրիշ արտմ վար էրե, ու զբալաք եզ լծե լուծք, օր ես բռնիմ ընծիկ նշան ու հ՚իգամ։

Կնիկն է օր հ՚ընկեր էր ճամբախ էկի, Զրլխատեն լէ մհանա էրեր էր թե, կէրթամ շուր բերեմ, էկեր էր էտոր ետևեն, պառկի գուբըմ ու անգամ կէներ։

Կնիկն օր հրմալ ասեց, տերտեր էլավ լծեց զբալաք եզ ու գնաց ուրին ուրիշ հ՚արտրմ կեր, կվարեր։

Տղեն չէ՞ զէդի լսեր էր, ինք լէ էկավ բալաք եզրմ լծեց ու գնաց իրիցու հ՚արտի սրմթ ուրանց հ՚արտրմ կեր, գրեց ու վար կէներ։

Կեսօրվա տան էղավ. տղեն տեսավ օր Քեռենկին դեմ էկավ ու ուրանց հ՚արտ էլավ դուրս։

Հոտաղ վազեց հացի միղրի բերան բացեց, տեսավ էդ օրվա իքրամ աղատն զառչի օրվան աղեկ է, բըլե շուրվեն էմ լը հետն է։

Տղեն մեկ լէ հարցուց, ասեց.— Զէդա շուրվեն հ՚որի՞ն ես բերի։

Քեռենկին պոճըմ կցեց.— Ձեր հ՚ապով իմ բերի, օր եղէղենի վրեն ուտեք, հովի ձըր ճիկար։

Հաց կերան, փրթան, ազատան. օր Քեռենկին էլավ ղամներ շալկեց կէրթեր, հոտաղն վերուց, ասեց.— Քեռենկի, կանի բանմ կասիմ քզիկ։

Քեռենկին ասեց.— Ի՞նչ է, ասե տեսնամ։

Տղեն վերուց ասեց.— Մըր քրդի հ՚արտի մեջ խաչըմ կա, էդ խաչ սրբու աեղ է էղի, անուն ս. Սոփինար է, մարթմ օր էրթա, խնդիրք ունենա, ի՞նչ ուզե, կկատարվի։ Էնդոր օր կիրակմտի հ՚իրկուն է։

Մնաց, օր էղավ կիրակմուտ, Զրլխատեն էլավ առավ զՔեռին

ու դնաց էգ տեխ, բացեց զքարեր, մտավ մըջ քաբերուն ու Քեռուն ասեց. «Շարե վըր ընծիկ ու թող գնա, վերջ, եբ Քեռենկին էկավ վըր ընծիկ, զուր ուխտն էրեց ու դառցավ գնաց, արի հանե տար»։

Կիրակմուտ օր էղավ, Քեռենկին էլավ առավ ջուխտմ մոմ ու պտղունցմ խունկ, գնաց էդ տեխ։ Գնաց հասավ էդ տեխ, վառեց զուր մոմերն ու զխունկ օր ծխեց, ասեց.— Ս. Սոփի, էկեր իմ քու դուռ, օր դու ղիմ դիլակ կատարիս, օ՜յ Ս. Սոփի, առնիս զՔեռին ու քուրօրթին։

Ջըլխատեն ներս մտուկ էր, լսեց, խորուն ձենով մը ասեց ներսեն.— Ամե՜ն...

Քեռենկին մեկ լէ՝ «Օ՜յ Ս. Սոփի, առնիս զՔեռին ու քուրօրթին»։

Տղեն ներսեն՝ «Ամե՜ն, ամեն» ասելուց սորա կդառնա Քեռենկան, կասե Ս. Սոփու բերնեն.— Գնա կարմիր խամ էրինջ զարկ զետին, մատաղ էրա, դիր հերիսա, վերին շուկի գլուխ տուքընդարից ըմլե նուկու մը չափ դեղ կրերիս, կթալիս հերիսի մեջ, Քեռին ու քուրօրթին կուտեն կմեռնին։

Քեռենկին դառցավ էկավ։ Լուսուն օր էղավ, բերեց զխամ էրինջ զարկեց գետին ու զխամարեն դրեց վրեն, խամարեմ հերիսա էփեց։

Ջըլխատեն լէ հոկուց էլավ, քշեց էդ տուքընդրի մոտ, ասեց.— Հանդե իմ Քեռենկին կիգա, քենե աղու կուզե, դու շաքար իտաս, ասես. «էդա է իմ աղուն»։ Մեկ լէ ուրին կասիս. «Օր կառնիս, կէրթաս, պետք է զքու քիթ ու մռութ աղեկըմ փաթիս, օր հոտ չէրթա քու բերնվե, մեռնիս»։

Քեռենկին օր զհերիսեն դրեց վրեն, քշեց գնաց էդ տուքընդրի խեչ, օր Ս. Սոփին էր սալըխի, առավ դեղն ու էկավ։ Բերեց, լցեց հերիսի մեջ։

Քեռին ու քուրօրթին, օր հերիսեն էփավ խըլըսավ, առան զդգալներն ու էկան հերիսի բոլոր։ Կուշտմ կերան, թրման։ Ջըլխատեն ու Քեռին չէ՞ ղուրանց խոսքեր մեկ էրած են, Հառջին հեղ, Ջըլխատեն էրեց.— Ա՜յ, ա՜յ, ես մեռա,— ու շոջավ գետին։

Քեռին տեսավ օր քուրոջ տղեն շոջավ գետին, ինք լէ.— Ա՜յ, ա՜յ,— էրեց ու օղմըկավ էնտոնց կշտի հետ։

Քեռենկին գունդմ եղ քսեց սիրտ ու էկավ մեկ լանկա էնդոր, մեկ էնդոր, սազեց կուլպի պոռու պես կտանե բերե։

Օր Քեռին ու քուրօրթին հ՚ընկան մեռան, հելավ վազեց գնաց

իրիցու մոտ, անկըշկլա տարավ.— Ջասե՞ս օր Քեռին ու քեռորթին փիցան։

Էրեցն օր լռեց զէդի, էղավ աշխրրքով. էլան էրկուս առան զիրար ու էկան Քեռու տուն։ Օր էկան տուն, կնիկն է բերեց պարզեց զխսիլ, զտերտեր փաթեց մեջ, օր մարդ չիգա դրսեն դրկեցներուց տեսնա, ու ինք լէ դրեց զթավեն թունդրան վրեն եղ կեռցուցներ, օր տերտերուն բան էփեր։ Գնաց հ՚աղբրեն շուր կբերեր։

Դու մրսի էն գահ օր կէրթա իրիցուն անկշլա կիտա, թե Քեռին ու քուրորթին փիցան, քուրորթին կելնի, ինչ շուր օր կէղնի տուն, կթափե զկուժ կծակե ու կէրթա ուր տեխ ընկնի։

Կնիկն է, զկուժ օր կառնե էրթա շրի, կըլնա, կըլնա՝ չլցվի, կվերցու իշկե օր տակ ծակ է, կասե. «Կա ու չկա էդի Զըլխատի շնութենն է»։ Կվերցու քրոշմ, քրոշ կզարկե ծակ ու զկուժ կիտա շրի դեմ։ Հար Քեռենկին կիգա, եղ օր կխժխժա, քուրորթին կելնի բերե զեղ հ՚ըլնա իրիցու բերնըվե ու ինք կիգա պառկի մեռնի։

Քեռենկին կդառնա հ՚իգա, կտեսնա օր էրեց թիք կանուկ է պատի էրսընվե, ու ակռեք բաց կծիծզա։ Եզ օր տաք էր էղի, մութներ վառեր էր։

Օր կտեսնա, կասե.— Տերտեր, դու հ՚որի՞ ձեն չրս իտա։ Տերտեր մեկ լէ ձեն չի տա։

Կէրթա մատ իտա հ՚ինք, կբռնե օր ժրժխե, չրրոնփ, տերտեր կհ՚ընկնի գետին։

Կիշքե օր տերտեր մեռուկ է, զգոմփ կդնե ուր զլուխն ու արև, տերտրու հ՚ապով։

Էդի էդտեխ օր կտփվի կիլա, Զըլխատեն կդառնա էն կշտին, էն կշտին ու կասե.— Հրր, ինչ խրտար քներ ինք ես,— կհելնի ու նստի։

Զըլխատեն օր հրմալ կէնե, ըստհաղ Քեռին կհելնի, կասե.— Հը՞ռ, ինչխրտար քներ ենք ես։

Զըլխատեն օր կելնի տեսնա Քեռենկին կտփվի, կասե.— Քեռենկի, աստված զխեր էնե, էգ ի՞նչ դավի է դու ծամ չթողեր վրը քու դլխուն։

Քեռենկին կասե.— Ըպա ես չտփվիմ ու հ՚իլամ, էլ որ կտփվի ու հ՚իլա, մեռնին Քեռին ու քուրորթին, իմա՞լ չիլամ։

Քուրորթին վերուց ասեց.— Անզգամ, օզորդ դու Քեռուն ու քուրորթուն հ՚ապո՞վ կիլաս, տերտրու համար կիլաս։ Զէ՞ օր մենք ընկանք մեռանք դու աշխրրքով էր էղի, հարիր լանկա ըն-

ծիկ զարկիր ու հարիր լէ իմ քեռուն։ — Էդ ասելուն կդառնա վըր Քեռուն.— Քեռի, հ'ելի զչանկըլներ առ ու էկո։

Քեռին էլավ առավ զչանկըլներն էկավ, մեկ թալին էն ծիծ, մեկ լէ էն ծիծ ու տարան հ'առքեն կախեցին, բերին էրին կտոր, կտոր, հորըմ փորին, լցին մեջ։

Եր զկնկա բան բուսցուցին, Քեռին ասեց.— Ըպա Զըլխատա, զէդա էրեցըն իմա՞լ էնենք։

Զըլխատեն ասեց.— Դու հ'սկուց լախա չունիս, էնի հասավ հ'իս։

Հ'իրկուն օր էղավ, մութ առավ զգետին, ոտք ու ձեռք կըտրավ գոներուց, Զըլխատեն էլավ զտերտեր շալկեց, առավ գնաց մեկ զանկին մարգում երդրքի վրեն դրեց, ասեց.— Զդուռ բացեք առեք հ'էսօր զիս ներս։

Ներսեն ասին.— Էդա գիշերով մարդ զուր դուռ հեչ կբանա՞։

Օր ասեց զդուռ չընք բանա ներսեն, Զըլխատեն ասեց.— Օր չբանաք, հանդե երդրքեն կթալիմ զիս ցած,— ասելն ու հա՛յ, հա՛յ իրիցու ջանդակ երդրքեն էկավ ցած։

Էդ օր էկավ ցած, տնեցիք շիվարան մանցին, իմալ զդուռ չբացինք, էդ մարդ զինք երդրքեն թալեց ցած, ասեց լէ «Կթալիմ զիս ցած», մենք չավտցանք։

Զըլխատեն էլ հեռվանց կաներ էր կիշքեր։ Օր զէդ տնեցոց ուր ու թութ լսեց, էկավ մոտեցավ, հարցուց, ասեց.— Հ'որի՞ ուր ու թութ դրեր եք ձըր տան մեշ, ի՞նչ է էղի։

Պատմեցին, թե հալ ու հեքիաթ հըմալ է էղի. «Մեկըմ էկավ մըր երդրքեն, ասեց՝ «Բացեք զձըր դուռ, հ'իդամ ներս», մենք չբացինք, զինք թալեց երդրքեն ցած, մեռավ»։

Տղեն ասեց.— Ի՞նչ կիտաք ընծիկ, օր զէդի տանիմ կորցում, ու մարդըմ չհասկնա հանցել ընծի։

Էդ մարդիկ ասին.— Ինչ օր կուզիս, կիտանք։

Տղեն ասեց.— Հ'իսուն-վաթսուն։

Հար քանի օսկի ուզեց, հանին տվին։ Տղեն շալկեց զիրիցու ջանդակն ու առավ գնաց։ Առավ տարավ ըստհախ ջաղցի մը վիզ, ծառվընե օղմըկցուց, կտրեց զջաղցի ջուրն ուրիշ ջաղցի դիով, զբահ դրեց էրիցու փեճին ու ինք լէ տեխըմ մտավ պատրվտավ։

Ջաղցպան տեսավ օր ուր շաղցի ջուր ցըփուն կտրավ ու ջաղաց էլ չդառնա[1]։

---

[1] Բն. էլ դառնա (Ծ. Կ.)։

Ասեց. «Կանի հ՚ելնիմ էրթամ տեսնամ, էդ ջաղցի ջուր հ՚ո՞րի կտրավ»։ Էլավ գնաց, տեսավ օր տերտերրմ օլրրեր է զջուր բիարի մը մեջ, ինք լէ դրեր է զբահ ուր փեճին ու օղմրկեր է ծառ։

Էրկու իրեք հեղ ասեց.— Տերտե՛ր, դու ղիմ ջաղցի ջուր հ՚ո-րի՞ն ես կտրի։

Տերտեր ձեն չէրեց։ Օր ձեն չէրեց, ջաղցպան է դու վար մի մնար, բահ մը հայ հայ իրիցու դլխուն իջավ։

Օր իջավ, էրեց հ՚էսօր չմեռեր է, տաս տարի կէնե մեռեր է, էկավ գետին։

Ջաղցպան ջիվար, զձեռք դրեց ծոց մնաց, ասեց. «Էդ ի՞նչ բան էր ես էրի։ Ես հ՚որի՞ զարկի պիլա հախ տեխ ղիդա մարդ սպանի, վաղ ի՞նչ ճուհապ իտամ էտոր տերվտոց, եբ հ՚իդան հ՚ոդա գտնան զէդ մարդ»։ Էդ հրմալ օր կասեր, կէրթեր, հ՚իգեր։ Զէ՞, Զըլխատեն էն տեղրանք պատվրտուկ էր, թռավ կանավ ջաղցպանի հ՚առջ։

— Էն ի՞նչ է էղի, ջաղցպան ախպեր։

Ջաղցպան է, իմալ օր մենք թարիֆ էրինք, հմալ թարիֆ էրեց էդ տղին, թե.— Էդա տերտեր էկեր էր զիմ ջաղցի ջուր կտրի, էձգի ուր բիարի մեջ, ելա էրկու հեղ կանչի ասի. «Տերտեր, հ՚որի՞ն իս զիմ ջաղցի ջուր կտրի». ձեն չտվեց, բահ մը զարկի գլխու, հ՚ընկավ մեռավ։ Հրմկա շիվարեր իմ, մանցի. լուսուն հ՚իդան զէդ մարդ տեսնան հ՚ոդա, ի՞նչ ճուհապ իտամ։

Տղեն ասեց.— Օր հրմալ է, ի՞նչ կիտաս ընծիկ օր տանիմ կորցում, մարդ չիմնա հ՚իսնե ու քեզնե զատ։

Ջաղցպան ասեց.— Ինչ օր կուզիս։

Ասեց.— Ես կուզիմ էտա խրդար ցորեն իտաս, օր տանիմ կորցում։

— Հայտե, ես ալ տվի,— ասեց ջաղցպան։

Վերուց ղիրիցու ջանդակ, տարավ ու հա՛յ, հա՛յ կանավ ծո-վու պռուկ ու լոռտեց, ասեց. «Դը գնա, սիրողութե՞ն կէնես իմ Քեռենկա հետ, սիրողութեն հրմալ կցուցուն մարդուս»։

Օր զէրեց թալեց ծով խըլըսավ, նոր էկավ ազապ ախչիկըմ գտավ, բերեց Քեռուն, պսակեց, յոթն օր, յոթ գիշեր հարսնիք էրեց։ Ընդոնք հասան ուրանց մուրազին, դուք լէ հասնիք ձըր մուրազին։

Աստծուց հ՚իջավ իրեք խնձոր՝ մեկ ասողին, մեկ լսողին, մեկ լէ՝ անկաճ էնողին։